

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Մրգաշատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-8) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

### 1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋՍԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ (ծածկագիր՝ 3.1-8)

- ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով,
- բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացում համապատասխան փաստաթղթերը,
- գ) հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին,
- դ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքային ենթակայության ճանապարհների ու ինժեներական այլ կառույցների պահպանության և շահագործման աշխատանքներին,
- ե) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպմանը,
- զ) քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների գործունեության կազմակերպման աշխատանքներին,
- զա) զբաղվում է համայնքի տնտեսական զարգացման հարցերով,
- է) իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,
- ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ, Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

#### ***Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝***

- ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն,
- բ) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
- դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու հմտություն:

#### ***Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.***

- ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),
- բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) երկու լուսանկար (3x4 չափսի),

է) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են Մրգաշատի համայնքապետարանում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչությունում, ամեն օր, ժամը 10-ից մինչև 18.00-Ս՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերը և պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Մրգաշատի համայնքապետարանի աշխատակազմ (գ. Մրգաշատ, հեռ.՝ 0237-7-2379) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-76-49/

***Մրցույթը կկայանա 2019 թվականի մայիսի 16-ին, ժամը 12: 00-ին Մրգաշատի համայնքապետարանում***

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2019 թվականի մայիսի 2-ը:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մրգաշատ 14 փողոց, 1 շենք:

Հեռ.՝ 0237-7-2379

Էլ. փոստ՝ mrgashat.armavir@mta.gov.am

